Դրամաշնորհային աջակցություն «Մարդկային անվտանգության ծրագրերի» համար ՖՏ 2023.
«Զառիթափի մանկապարտեզի վերանորոգման» ծրագրի ստորագրման արարողություն

2023 թվականի հոկտեմբերի 24-ին Վայոց ձորի մարզում տեղի ունեցավ «Զառիթափի մանկապարտեզի վերանորոգման ծրագրի» մինչև 64,629 ԱՄՆ դոլար ֆինանսավորմամբ Մարդկային անվտանգության «Grassroots» ծրագրերի համար դրամաշնորհային աջակցության ստորագրման արարողությունը:

Դրամաշնորհի պայմանագիրը կնքվել է Հայաստանում Ճապոնիայի դեսպան պարոն Ֆուկուշիմա Մասանորիի և Վայք համայնքի ղեկավար պարոն Մխիթար Մաթևոսյանի միջև: Արարողությանը ներկա էին նաև Վայոց ձորի մարզպետ պարոն Արարատ Գրիգորյանը և Զառիթափ մանկապարտեզի տնօրեն տիկին Շուշանիկ Ասլանյանը, ինչպես նաև մանկապարտեզի երեխաներն ու նրանց ծնողները:

Այս ծրագիրը նպատակ ունի ընդլայնել նախադպրոցական կրթության կարողությունները Զառիթափում և հարակից համայնքներում՝ մանկապարտեզի վերանորոգման և կրթական սարքավորումների տրամադրման միջոցով: Արդյունքում մոտ 70 երեխա նոր մանկապարտեզ կհաճախեն, այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղից տեղահանված երեխաներ:

Երեխաների ողջույնը

Դեսպան Ֆուկուշիմայի ելույթը

Դեսպան Ֆուկուշիմայի և պարոն Մաթևոսյանի միջև դրամաշնորհային պայմանագրի ստորագրումը

Վերանորոգման ենթակա մասնաշենքը